ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Առանձնատիպ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր,
1980 № 2

ԵՐԵՎԱՆ—1980

ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հայաստանի առաջին բաժանումից (387) 204 տարի անց՝ 591 թ., այն երկրորդ անգամ բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև։ Եթե 387 թ. բաժանման գիծն անցնում էր Կարինով, ապա 591 թ. այդ գիծը շարժվեց դեպի արևելք։ Արարատյան նահանգի զգալի մասը սահման ունենալով Ազատ գետը, պարսկականից անցավ բյուզանդական տիրապետության տակ։

Մորիկ կայսեր (582—602) հրամանով Հայաստանի նոր բաժանմամբ իր տիրապետությանն անցած մասում հայ լուսավորչական բնակչությանը հունադավան-քաղկեդոնական դարձնելու նկատառումով հայոց եկեղեցին ևս տրոհվեց երկուսի ու այդ ժամանակ էլ բյուզանդական մասում գտնվող Ավան գյուղաքաղաքը և նրա կաթողիկե եկեղեցին դարձան հակաթոռ կաթողիկոս Հովհան (Յոհան) Բագարանցու նստավայրը։ Հայաստանի՝ Պարսկաստանին անցած մասում հոգևոր կենտրոնը շարունակում էր մնալ Դվինում, որտեղ դեռևս 574 թ. գահակալում էր Մովսես Բ Եղվարդեցին։

Հայ ճարտարապետության ազգային դեմքի կազմավորման և հետագա զարգացման առումով մեր մյուս հուշարձանների թվում Ավանի կաթողիկե եկեղեցու դերը, որպես ճարտարապետական կառուցվածք, մեծ է եղել։ Այժմ կիսակործան վիճակում պահպանվող այդ հուշարձանը մեր դարավոր ճարտարապետության պատմության համար ունի անգնահատելի արժեք։

Ավանի տաճարը հետաքրքրել է շատերին։ Նրա կառուցվածքային առանձնահատկությունների և ճարտարապետության վերաբերյալ հետաքրքիր մտքեր են հայտնել արվեստաբանության մեծ գիտակները, գրվել են նաև շատ հոդվածներ՝ տարբեր առումներով, տարբեր մեկնաբանությամբ։ Հեղինակների մեծամասնությունն իր ուշադրությունը բևեռել է տաճարի կառուցման ժամանակի ճշգրտման վրա, նկատի ունենալով, որ դրա օգնությամբ պիտի հնարավոր լինի պարզել նաև տաճարի տվյալ տիպի առաջացման տեղն ու տարածման ուղիները։ Թ. Թորամանյանի կարծիքով՝ Ավանի տաճարը կառուցվել է VI դ. վերջերում, Կ. Ղաֆադարյանի կարծիքով՝ VI դ. երկրորդ կեսում, իսկ ըստ հետազոտողների մեծամասնության՝ 590/591—602/610 թթ. միջև[1]։

---

1 *Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 71, Կարո Ղաֆադարյան, Պատմա-հնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 90),* Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, *էջ 79*; Р. Я. Агабабян, Реконструкция Авана («Труды ЕрПИ», Ереван, 1948, *էջ 282)*, В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1948, *էջ 287*, А. Л. Якобсон, Очерки истории зодчества Армении, М.—Л., 1950, *էջ 21*, А. Б. Еремян, Храм Рипсимэ, Ереван, 1955, *էջ 91, Ս. Խ. Մնացականյան, Ակնարկներ հայ ճարտարապետության պատմության, Երևան; 1964, էջ 146։*

Ավանի տաճարի կառուցման ժամանակի որոշումը սերտորեն պայմանավորված է Հովհան Բագարանցու կաթողիկոսական գործունեությամբ ընդհանրապես։ Մեր մատենագիրների հաղորդումների համաձայն, Ավանում հակաթոռ կաթողիկոսությունը հիմնվել է 591 թ.։ Նույն հաղորդումներով պարզվում է, որ Հովհան Բագարանցին մահացել է 610—611 թթ. և թաղվել է իր իսկ կառուցած Ավանի եկեղեցու մոտ[2]։

Բ. Առաքելյանը, ի տարբերություն մյուս հետազոտողների, հիմնվելով պատմական փաստերի վրա, գրում է, որ Ավանի եկեղեցու կառուցումը պետք է ավարտված լինի ամենաուշը 602 թ., քանի որ Ավանի հակաթոռ կաթողիկոսությունը 602 թ. դադարել է գոյություն ունենալուց[3]։

Նոր ուսումնասիրությունները պարզում են, որ Ավանի եկեղեցին կառուցվել է ավելի վաղ։ Օրինակ, Կ. Ղաֆադարյանը գրում է, որ Հովհան Բագարանցին «անշուշտ կաթողիկոս դառնալուց առաջ իր հիմնադրած Ավանի տաճարի վանահայրն է եղել և այդ տաճարը կառուցել է ավելի շուտ, քան կաթողիկոս դառնալը... այլապես պետք է ենթադրենք, որ այդ Հովհան հակաթոռն առանց եկեղեցու է սկսել իր գործունեությունը Ավանում»[4]։ Կ. Ղաֆադարյանը այս նույն տեսակետն է պաշտպանում 1975 թ. հրատարակած իր «Երևան, Միջնադարյան հուշարձանները» աշխատության «Ավանի կաթողիկե տաճարը» գլխում։

Ավանի տաճարի կառուցման ժամանակի հարցը քննելիս ստորև համեմատելու և զուգահեռ քննության ենք ենթարկելու Կ. Ղաֆադարյանի և Ա. Երեմյանի վերջին աշխատությունները, քանի որ այս երկու հետազոտողներն են, որ առավել հանգամանորեն են զբաղվել այդ հարցով։ Հիշյալ երկու հեղինակներն իրենց աշխատություններում դիմում են առավելապես մատենագիրների հաղորդումներին, և եթե Կ. Ղաֆադարյանն ինչ-որ չափով անդրադառնում է տաճարի ճարտարապետական վերլուծությանը, ապա Ա. Երեմյանը՝ գրեթե ոչ։ Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, հուշարձանների թվագրման ընթացքում առավել հավաստի եզրակացություններն արվում են հուշարձանի հետ կապված նյութերի համակողմանի քննության հիման վրա, այդ թվում՝ մատենագիրների հաղորդումների, արձանագրությունների ընթերցման ու վերծանման, բուն շինության ճարտարապետական և շինարարական վերլուծության արդյունքների վրա։ Նման մոտեցումը մեզ հնարավորություն է ընձեռում համաձայնելու Կ. Ղաֆադարյանի հետ և համոզվելու, որ Ավանի տաճարը կառուցվել է նախքան Հովհան Բագարանցու՝ Ավանի կաթողիկոսական գահը զբաղեցնելը։ Այլ հարց է, թե մինչ այդ Հովհանը Ավանի եկեղեցու վանահա՞յրն էր, թե ոչ։

Այլ կարծիքի է Ա. Երեմյանը։ Նա գրում է, որ «Հովհան Բագարանցու կառավարելու ժամանակամիջոցը որոշելու համար հատուկ ուշադրության են արժանի պատմիչների հաղորդումները նրա քսանվեց տարի կաթողիկոսելու վերաբերյալ։ Այդ ժամկետը հաստատում են Հ. Դրասխանակերտցին (X դ.),

---

2 «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 54, 78, Ն. Ակինյան, Կյուրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 118—121։

3 «Գրական թերթ», 18. X. 1968։

4 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 89։

Ս. Անեցին (X դ.), Կ. Գանձակեցին (XIII դ.) և ուրիշներ»[5]։ Այնուհետև նա շարունակում է. «գիտենալով Հովհանի պատրիարքության տևողությունը (26 տարի), կարելի է որոշել նրա կառավարելու սկիզբը (610—26=) 584 թվականը։ Այս եզրակացությունը հաստատվում է Ստ. Օրբելյանի հաղորդմամբ առ այն, որ Հովհան Բագարանցին մինչև Կոտայք տեղափոխվելը կաթողիկոս է եղել Թեոդոսիոպոլում—Կարինում»[6]։ Ապա Ա. Երեմյանը եզրակացնում է, որ «584 թ. նա Կարին քաղաքում ձեռնադրվել է բյուզանդական Հայաստանի քաղկեդոնական հայերի կաթողիկոս։ 588/59 թթ., երբ Հայաստանի մեծ մասն անցնում է Բյուզանդիային, Մորիկ կայսրը շտապում է կաթողիկոսության կենտրոնը Կարինից տեղափոխել հայ քաղկեդոնականների խոր թիկունքը՝ Արարատյան աշխարհը—Կոտայք գավառի Ավան գյուղաքաղաքը»[7]։ Կ. Դաֆթարյանը մերժում է Ա. Երեմյանի այս եզրակացությունը, գրելով, որ «Այս միանգամայն սխալ եզրակացությանը նա հանգել է պատմագրին ճիշտ չհասկանալու պատճառով։ Պատմագրի այն արտահայտությունը, թե «Յովհան ոմն Թեոդուպոլիս եղև կաթուղիկոս, և եկեալ էդ աթոռ ի Կոտայսն յԱրամոնս գիւղ» (Ստ. Օրբելյան, էջ 90—91), պետք է հասկանալ, որ Հովհանը կաթողիկոս է ձեռնադրվել (կաթողիկոս եղավ) Թեոդուպոլսում և գալով՝ իր աթոռը հաստատեց (դրեց) Կոտայքի Արամուս գյուղում և ոչ թե կաթողիկոսություն է արել Թեոդուպոլսում և հետո եկել Արամուս»[8]։ Ա. Երեմյանից առաջ՝ Հովհանի կաթողիկոսության պատմիչների նշած «26 տարուն» դումարվում էր 590 թ. և ստացվում էր 616 թ., այսինքն Հովհանի մահանալուց շուրջ հինգ տարի ուշ։ Այս հիման վրա, վերոհիշյալ «26 տարին» անհարկի համարվում էր ակներև սխալ։ Ինչպես հայտնի է, Մորիկը կայսր է դարձել 582 թ. ու այդ ժամանակ նրա տիրապետության տակ էր գտնվում Հայաստանի մի մասը։ Հայաստանի պարսկական և բյուզանդական մասերի սահմանն անցնում էր Կարին—Թեոդուպոլիսով։ Հայտնի է նաև, որ Կարինը Հայաստանի բյուզանդական մասի եկեղեցական կենտրոնն էր։ Մյուս կողմից, Մորիկը նոր չէր հղանում Հայաստանը Բյուզանդիային միացնելու գաղափարը ու նոր չէր հասկանում եկեղեցու դերն այդ գործում։ Հետևաբար, հասկանալի է, որ Մորիկը այն, ինչ անում էր Հայաստանի նոր բաժանումով իրեն անցած բաժնում՝ Ազատ գետից արևմուտք, Հայաստանի բյուզանդական մասում նույնը պիտի արած լիներ ավելի վաղ, այսինքն՝ Կարինում պիտի ստեղծած լիներ հակալուսավորչական, Դվինին հակաթոռ քաղկեդոնական կաթողիկոսություն, և որ այդտեղ էլ կաթողիկոս եղած պիտի լիներ Հովհան Բագարանցին, ինչպես այս հաստատում է պատմիչ Ստ. Օրբելյանը[9]։

---

5 А. Б. Еремян, К вопросу о датировке кафедральной церкви в Аване, (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1969, № 3, էջ 52), «Յովհաննու Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», էջ 74, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 51, «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 77, «Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 60։

6 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1969, № 3, էջ 53։

7 Նույն տեղում։

8 Կարո Դաֆթարյան, Երևան, Միջնադարյան հուշարձանները, Երևան, 1975, էջ 65։

9 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան, արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 90—91։

Սրանից հետևում է, որ հայկական եկեղեցու ստիպողական տրոհումը երկուսի տեղի է ունեցել 591 թ. շատ ավելի վաղ, մի տարբերությամբ միայն, որ Կարինի հակաթոռ կաթողիկոսությունը եղել է Դվինից հեռու և նրանց հակամարտությունը չի եղել այնպես սուր, ինչպես հետո, երբ այդ կաթողիկոսությունները աշխարհագրական առումով շատ մոտ էին միմյանց։ Այսպիսով միանգամայն տրամաբանական է եզրակացնել, որ Հովհաննն իր կաթողիկոսությունը նոր չէր ստեղծում. իրոք որ նա այն Կարինից տեղափոխում էր Ավան։

Ուշադրության արժանի է, որ տարբեր պատմիչներ նույն ձևով են հաղորդում մեր եկեղեցու տրոհման մասին։ Նրանք չեն ասում ստեղծվեց հակաթոռ կաթողիկոսություն և կաթողիկոս դարձավ Հովհաննը և այլն։ Նրանք ասում են՝ հայ եկեղեցին բաժանվեց երկուսի, պարսկական մասում նստեց Մովսեսը, բյուզանդական մասում՝ Հովհաննը[10]։ Բնականորեն այն տպավորությունն է ստեղծվում, թե այդ կաթողիկոսները երկուսն էլ միաժամանակ են ձեռնադրվել։ Մեզ, իհարկե, հայտնի է, որ Մովսեսը Դվինում ձեռնադրվել է դեռևս 574 թ., իսկ Հովհաննը՝ ավելի ուշ, թերևս Մորիկի կայսր դառնալուց անմիջապես հետո, կամ մի քիչ էլ ուշ։ Հնարավոր չէ՞ մտածել, որ պատմիչների հաղորդման այդ ձևակերպվածությունն ավելի հնից է գալիս։ Հայ կաթողիկոսների ճանաչում գտած ցուցակում Դվինի կողմից չընդունված հակաթոռ կաթողիկոսները չկան, դրա համար էլ նրանց գործունեության մանրամասները չեն հիշվում հատկապես հոգևորական պատմիչների հաղորդումներում։ Այդպես էլ եղել է Հովհանի կարինյան շրջանի գործունեության հետ։ Ավանի կաթողիկոսության ստեղծման և այդտեղ աթոռակալ կարգվելու ժամանակներում Հովհան Բագարանցին եղել է շատ հարգված, ճանաչված հոգևոր գործիչ։ Կ. Ղաֆադարյանի այն թեզը, թե Հովհաննը նախքան Ավանի կաթողիկոսության ստեղծումը, եղել է իր կառուցած տաճարի եկեղեցպանը, քիչ հավանական է։ Հովհաննը պետք է կաթողիկոս եղած, մեծ և դրական գործունեություն ծավալած լիներ նման պատվի արժանանալու համար։ Ավելի հավանականն այն է, որ Հովհաննը, լինելով Կարին—Թեոդուպոլսի հայ-քաղկեդոնական եկեղեցու աթոռակալ, դրական գործունեություն է ծավալել ազգի և եկեղեցու՝ երկուսի տրոհված լինելու պայմաններում։ Կ. Ղաֆադարյանը, ինչպես ասվեց վերևում, համոզված է, որ Ավանի եկեղեցին Հովհաննը կառուցել է նախքան Ավանի հակաթոռ կաթողիկոսության հիմնադրումը։ Նրա այս կարծիքը պետք է համարել ընդունելի։ Ա. Երեմյանը գտնում է, որ Հովհաննը, նախքան Ավանի կաթողիկոսության հիմնադրումը, կաթողիկոս է եղել Թեոդուպոլսում։ Այս կարծիքը ևս պետք է ընդունելի համարվի։ Այդ դեպքում օրինական հարց է առաջանում, թե Հովհաննը ե՞րբ է ժամանակ գտել Ավանի տաճարը կառուցելու համար։ Համաձայն Ա. Երեմյանի, Հովհաննը Ավանի հակաթոռ կաթողիկոս ձեռնադրվելով, Թեոդուպոլսից ժամանում է Կոտայք, իջնում Արամուսում, այդ ժամանակ էլ կառուցում է Ավանի եկեղեցին, ապա Արամուսից տեղափոխվում է Ավան։ Սրանից ելնելով, նա եկեղեցու կառուցման սկիզբ է համարում 588/590 թթ.։ Եկեղեցու կառուցմանը հատկացնելով

---

10 Հ. Բ. Սարգսյան, Անանուն ժամանակագրութիւն, խմբագիր յօրինեալ ԺԷ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վենետիկ, 1904, էջ 76, Ստ. Օրբելյան, էջ 90—91, Սեբեոս, էջ 54։

յոթ տարի, նա կառուցման ավարտը համարում է 595/597 թթ.[11]։ Կ. Ղաֆադարյանը Ա. Երեմյանի այս կարծիքի հետ նույնպես չի համաձայնում և գրտնում է, որ նա Ավանի կառուցումը մոտ տասը տարով ուշացնում է։ Կ. Ղաֆադարյանը միաժամանակ նկատում է, որ «Արամուսն ու Ավանը իրար մոտիկ գյուղեր լինելու հետևանքով Օրբելյանը շփոթել է միմյանց հետ և Ավան գրելու փոխարեն Արամուս է գրել։ Այդ երևում է նրանից, որ այդտեղ Օրբելյանը ոչ մի ակնարկ չունի Ավանի մասին։ Ըստ Օրբելյանի, Հովհանը ոչ թե Ավանում, այլ Արամուսում է հաստատել իր աթոռը և այնտեղ էլ մնացել»[12]։ Սակայն խնդիրն առավել ուշադիր քննելու դեպքում հնարավոր է դառնում մեր պատմիչների թողած տեղեկությունները ճիշտ հասկանալ և առաջին հայացքից միմյանց հակասող տեղեկությունները պատմիչների սխալով չմեկնաբանել։

Նկ. 1. Շքամուտք Ավանի տաճարի արևմտյան ճակատի վրա։
Նկ. 2. Հետագայում բացված մուտք Ավանի տաճարի հյուսիսային խորանի ներքնամասում։

Արդ դիմենք Ավանի շինության ճարտարապետական վերլուծությանը, փորձենք դիտարկել նրա մինչ այժմ պահպանվող ավերակը, քննենք նրա դրվագներից մեկը՝ տաճարի մուտքերի հարցը։ Պարզվում է, որ Ավանի տաճարն ի սկզբանե միայն մեկ մուտք է ունեցել՝ արևմտյան ճակատի վրա (նկ. 1)։ Այն այժմ էլ պահպանվում է և լավ վիճակում է։ Ավերակում մի մուտք էլ կա, որ գտնվում է տաճարի հյուսիսային ճակատի կենտրոնում։ Նույնիսկ առանց հանգամանալի քննության, այդ մուտքի հետագայում ստեղծված լինելը կասկած չի հարուցում։ Տաճարի հյուսիսային ճակատի ներքնամասում պատը քանդել են և առաջացած բացվածքում՝ երկու կողքերից և վերևից նոր քարեր ամրացրել ու ձևակերպել են մուտք։ Հետագայում դրված քարերը մինչ այդ գոյություն ունեցող պատի կանոնավոր շարվածքի

11 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1969, № 3, էջ 55։

12 Կարո Ղաֆադարյան, Երևան, Միջնադարյան հուշարձանները, էջ 65։

հետ հարմարեցված են պակաս վարպետությամբ (նկ. 2)։ Որ այդ մուտքը հետագա վերակառուցման արդասիք է, չի վիճարկում Ավանի տաճարով զբաղվողներից որևէ մեկը։

Ճարտարապետական-շինարարական վերլուծությունից բացի, ավանդույթով հայտնի է, որ մեր հին հուշարձաններում արևմտյան մուտքից բացի, մի այլ մուտքի անհրաժեշտության դեպքում, բացվում էր հարավային կողմից։ Խուսափում էին փչող ցուրտ քամիների կողմից (որոնք մեզանում հյուսիսից են) դռներ և պատուհաններ ունենալ։ Հյուսիսային մուտք ստեղծվում էր միայն այն դեպքում, երբ մի այլ շինության հետ անմիջականորեն կապվելու անհրաժեշտություն էր լինում կամ հետագայում առաջանում։ Որպեսզի պարզենք, թե ե՞րբ և ի՞նչ առիթով պիտի բացված լիներ այդ երկրորդ՝ հյուսիսային մուտքը Ավանի տաճարում, կրկին անդրադառնանք տաճարի ավերակին։ Բանն այն է, որ Հովհան Բագարանցին ձեռնադրվելով Ավանի նոր ստեղծված կաթողիկոսության գահակալ, անմիջապես ձեռնարկում է կաթողիկոսարան-վեհարանի կառուցումը, որը, ինչպես ցույց են տալիս հուշարձանի պեղումներով այժմ բացված մնացորդները, գտնվում էր տաճարի հյուսիսակողմում՝ մի երկու քայլի վրա։ Հովհանը վեհարանի և տաճարի միջև անմիջական (թերևս ծածկված) կապ և անցում ապահովելու նպատակով քանդել է տվել մինչ այդ գոյություն ունեցող եկեղեցու հյուսիսային խաչաթևի ներքնամասը, ստեղծելով այն մուտքը, որ առկա է ավերակում և անխախտ վիճակում է։ Այս պարագան ինքնին հավաստում է, որ Ավանի տաճարը կառուցվել է նախքան Ավանի հակաթոռ կաթողիկոսության հիմնադրումը և նախքան Հովհան Բագարանցու գահակալությունը Ավանում, որը տեղի է ունեցել 590/591 թթ.[13]։

Հասկանալի է, որ կաթողիկե տաճարի և կաթողիկոսարան-վեհարանի միաժամանակ կառուցվելու դեպքում տաճարի հյուսիսային խաչաթևի վրա շինարարական օրինականությամբ մուտք կթողնվեր ի սկզբանե։ Հետաքրքիր է, որ այս նույն հանգույցում առկա է մի այլ վերակառուցում ևս՝ հյուսիսային խորանի ներքնամասում, այդտեղ բացված մուտքի աջ և ձախ կողմերում առկա է քարե շարվածք, որ 115 սմ առաջանում է խորանի բոլորակ պատից և բարձրությամբ դրեթե հասնում է մուտքի բարավորին (վերին շարքը չկա, ընկել է)։ Տաճարի հետազոտողներից ոչ ոք չի անդրադարձել այն հարցին, թե այդ որմնաշարքն ինչ նպատակով է տվյալ տեղում ավելացվել (այն ակներև հետագա հավելում է)։ Մենք ենթադրում ենք, որ Ավանի տաճարը 590/591 թթ. կաթողիկոսական եկեղեցու փոխարկելով, հյուսիսային մուտքի վերևում Հովհան Բագարանցու համար ստեղծվել է գահավորակ։ Թերևս այդ նկատի ունենալով է, որ, նախ խիստ փոքր (մոտ 130 սմ) բարձրություն է ստացել նորաբաց մուտքը և, ապա, խորանի բավական մեծ պատուհանը փակվել է զգալի չափերի տուֆաքար շարվածքով։ Դրանով օթյակը պատսպարվել է հյուսիսից փչող քամիներից, ստեղծելով պատշաճ հարմարավետություն։ Նույնպիսի պատկեր գոյություն ունի Աղթամարի հարավային խորանում։

---

13 Ա. Երեմյանի կողմից Հովհան Բագարանցու կաթողիկոսության սկիզբը Ավանում 588/590 թթ. համարելը ճիշտ չէ, պետք է ընդունել 590/591 թթ., քանի որ 588 թ. (602—14=588) պատմիչի (Natratiode rebus Armeniane) կողմից նշվում է ոչ թե իբրև Հովհանի Ավանում կաթողիկոսելու տարի, այլ Հովհանի և Մովսեսի միջև հակասությունները սրվելու տարի։ Կաթողիկոսությունը չէր կարող Հայաստանի երկրորդ բաժանումից (590/591) ավելի շուտ հիմնադրվել Ավանում։

Այդտեղ նույնպես մուտքի գլխավերևում ստեղծված է Գագիկ Արծրունու օթյակը, ուր բարձրացող քարե աստիճանները հետագայում քանդել և կառուցել են զանգակատուն։

Այսուամենայնիվ ե՞րբ է կառուցվել Ավանի տաճարը։

Ինչպես երևում է, Հովհանը Ավանի տաճարը կառուցել է շատ ավելի վաղ և նախապես ոչ որպես կաթողիկոսանիստ տաճար, ապա դարձել է նրա եկեղեցությանը, ինչպես ենթադրում է Կ. Ղաֆադարյանը։ Այդպիսի նորաձև տաճար կառուցելը նրան դարձնում է տեսանելի, նշանավոր։ Թերևս այդ ժամանակ էլ նրան հրավիրում են Կարին, եկեղեցական գործունեության համար։ Հնարավոր է ենթադրել, որ 582 թ. Մորիկը կայսերական գահ բարձրանալով, մեկ կամ դուցե երկու տարի անց նրան դարձնում է Կարինի հայ-քաղկեդոնական եկեղեցու գահակալը։ Այդ օրվանից հետո Հովհանը չէր կարող պարսկական տիրապետության տակ գտնվող Ավանում որևէ կառուցում կատարել։ 591 թ. Մորիկը պարսիկներից գրավելով Հայաստանի նոր նահանգներ և սահման ունենալով Ագատ գետը, Հովհանին Կարինից տեղափոխում է Ավան և նրա իսկ կառուցած տաճարում հիմնադրում հակաթոռ կաթողիկոսություն։ Մինչ այդ, երբ Հովհանը դեռ Կարինում էր, Արամուսում կառուցում են եկեղեցի, ճիշտ Ավանի նման։

Հովհանը Կարինից ժամանելով Կոտայք, իջևանում է Արամուսում և այդտեղից ղեկավարում արդեն աթոռանիստ հռչակված Ավանի տաճարի հյուսիսակողմում գտնվող կաթողիկոսարանի շինարարությունը։ Ահա այդ ժամանակ էլ նրա կարգադրությամբ, ինչպես արդեն ասվեց, քանդում են Ավան տաճարի հյուսիսային խորանի ներքնամասը և ստեղծում դուռ՝ անմիջական կապ կաթողիկոսարանի ու կաթողիկոսական դարձած տաճարի միջև։ Այսպիսով, հնարավոր է դառնում եզրակացնել, որ Ավանի եկեղեցու կառուցումը ավարտված է եղել մինչ 582/584 թթ., իսկ Արամուսի կառուցումը՝ մինչ 590/591 թթ.։ Կաթողիկոսարան-վեհարանի կառուցումը պիտի իրականացված լինի 591—592 թթ. ընթացքում։ Ահա այդ ժամանակ էլ կաթողիկոս Հովհան Բագարանցին Արամուսից տեղափոխվում է իր աթոռանիստը՝ Ավան։ Կարինում Հովհանի կաթողիկոս դառնալը ընդունելով 582/584 թթ. և դրան ավելացնելով պատմիչների հաղորդած 26 տարին (582/584+26=608/610), ստանում ենք ընդունված համարվող 608/610 թթ.։

Ա. Երեմյանը նկատի ունենալով Բագարանցու նախ Արամուս գալը և ապա Ավան տեղափոխվելը, եզրակացնում էր, որ Արամուսը Ավանից վաղ է կառուցվել[14]։ Այդ երկու շինությունների ճարտարապետական համեմատական վերլուծությամբ մենք եզրակացրել էինք, որ Ավանը նախորդել է Արամուսին[15]։ Սակայն Ավանի կառուցման ժամանակի ճշգրտմամբ վերանում է հիշյալ հակասությունը. անկախ Բագարանցու նախ Արամուսում իջևանելու հանգամանքից, Ավանը նախորդել է Արամուսին։

Կ. Ղաֆադարյանը հակասություն է տեսնում Ա. Երեմյանի հաշիվներում և դրանից ելնելով գրում է. «Մեզ անհասկանալի են նաև Երեմյանի առաջարկած իրարամերժ թվականները։ Հոդվածի վերջում, եզրահանգումների 1-ին կետում նա գրում է, որ Հովհանը կաթողիկոս է եղել 584-ից մինչև

---

14 А. Б. Еремян, Храм Рипсимэ, էջ 93—100։

15 Տ. Մարության, Ավանի տաճարը, 1976, էջ 46—49։

610 թվականը—26 տարի (Գանձակեցու համաձայն), իսկ մի քանի տող հետո, նույն եզրահանգումների 4-րդ կետում գրում է, որ Ավանի քաղկեդոնիկ կաթողիկոսությունը իր գոյությունը դադարեցրել է 602/603 թթ.»[16]։ Պետք է համաձայնել, որ Հովհան Բագարանցին VII դ. սկզբում պարսկա-բյուզանդական պատերազմական գործողությունների բերումով հեռանալով Ավանից, չի դադարել կաթողիկոս ճանաչվելուց։ Նա Կարինում հայ համայնքի կողմից պիտի ճանաչված լիներ որպես կաթողիկոս։ Նույնիսկ այն ժամանակ, երբ պարսիկները Կարինի հայ բնակչությանը Հովհան Բագարանցու հետ միասին աքսորի են քշում Համադան, Հովհանը ճանաչվել է որպես կաթողիկոս։ Այս դեպքերը գրի առնելիս պատմիչները նրան անվանում են կաթողիկոս։ Եվ, վերջապես, Հովհանը մահացել է (609/611 թթ.) որպես կաթողիկոս։ Կ. Ղաֆադարյանը հիմնվելով VII դ. առաջին տասնամյակում տեղի ունեցած դեպքերի վրա, Հովհանի հեռանալը Ավանից, ի տարբերություն մյուս հետազոտողների, թվագրում է 607-ով՝ 606 թ. չհաջողված կաթողիկոսական ընտրությունից հետո և նորընտիր Աբրահամ կաթողիկոսի գահակալումից առաջ։ Այս հանգամանքը որևէ փոփոխություն չի մտցնում Ավանի տաճարի կառուցման ժամանակի հարցում և, հետևապես, դրա լուսաբանմանն այստեղ չենք անդրադառնում։

Ավանի կառուցման ժամանակի ճշգրտումով անառարկայական են դառնում Ավանի տաճարի վերաբերյալ մինչ այս առաջ քաշված բոլոր, ըստ էության կեղծ, տեսությունները ու անհիմն գրույթները։ Ճարտարապետության ընդհանուր պատմությանը հայտնի Ավանի տիպի մյուս տաճարները կառուցվել են Ավանից հետո։ Ավանը եղել է նախօրինակը, որին հաջորդները որոշ առումներով կրկնել, որից ինչ-որ կողմեր վերցրել և որին ինչ-որ ձևով նմանվել են, ապա կատարելագործվելով, նոր աստիճան կազմելով, որպես արվեստի գործեր, նոր արժեք են նշանավորել պատմական հաջորդ փուլերում։

ВРЕМЯ ПОСТРОЙКИ ХРАМА В АВАНЕ

ТИРАН МАРУТЯН

Резюме

Время возведения Иоанном Багаранци храма в Аване архитектор-ученый Торос Тораманян относит к концу VIв., историк-археолог К. Кафадарян—ко второй половине VI в. Ряд специалистов полагает, что строительство храма было связано с созданием в Аване в 591г. противопрестольного халкедонитского католикосата. А. Еремян начало возведения храма относит к 588/590 гг., а окончание строительства—к 595/597 гг.

Архитектурно-строительные исследования развалин храма явствуют, что его строительство было завершено до создания противопрестольного католикосата в 591 г., а именно: до 584 г., т. е. до того, как Иоанн Багаранци занял престол католикоса в Карине. Это подтверждается и тем, что во время пребывания католикоса в Карине, под протекторатом Византии, он не мог вести строительство в Аване, при персидском владычестве.

16 Կարո Ղաֆադարյան, Երևան, Միջնադարյան հուշարձանները, էջ 65։